

## 1878

Անցաւ տարի մ'ալ. և իբրեւ դիպաց և եղելոց բովանդակիչ՝ ըստ մեծի մասին դառն ու տխուր յիշատակներ, ինչպէս համաշխարհի՝ նոյնպէս և մեր ազգային դիւանաց կարգին մէջ զետեղեց։ Անցաւ այո՛ւ. բայց աւանդ, շատ մեծ հետք թողլով արկածից և աղետից, որք անշուշտ ոչ նիւթական տարւոյն ընթացից պէ՛տ դիւրաւ անցանելի պիտի ըլլան. երբ ֆնաս և ամենազգի կորուստ դժբաղդաբար ստոյգ ժառանգութիւն եղան 'ի նմա մարդկութեան, և առանձինն ազգերնուս, և անստոյգ՝ յոյս և խոստումն յայնցանէ պատճառելի բարեաց։ Ուրեմն քսմնելի է ըստ զանազան գլխոց հայազգի սրտի համար յիշատակն անցեալ 1877 տարւոյն, և անձկանօք ողջունելի գալուստն ներկայիս. որ եթէ չըլլայ ալ 'ի լուսացայտ ալեաց բերկրազուարթ և նորոց բարեաց աւետաւոր, այլ գոնեա 'ի ծխաշունչ և յերկարատեւ արեանց և յաւերմանց, պիտի պարգևէ մեզ զցանկալին քան զամենայն զխաղաղութիւնն հին, և անշուշտ նաեւ զապահով հանգըստութիւն կենաց, յորմէ կախումն ունին այլ ամենայն բարիք։ Կ'ողջունենք ուրեմն ըստ այսմ՝ սրտալիր ուրախութեամբ զիւր գալուստն, և խաղաղաբեր ու աւետաբեր իսկ կը մազթենք 'ի մասնաւորի բովանդակ մեր համազգեաց, ըստ նիւթականին և ըստ բարոյականին։

Ըստ նիւթականին ըսինք և ըստ բարոյականին, և կը յուսանք մեծապէս, մտածելով մանաւանդ՝ որ եթէ ազգերնիս այսպիսի դժուար ժամանակի մէջ ոչ միայն չլքուաւ կամ չահաբեկեցաւ, այլ և ցուցուց ըստ մասին խրախոյս ու գործունէութիւն, որով կրկին և կրկին բողբոջեց ընդդէմ հարստահարութեանց և հանդանակեց բաւական մեծագումար օգնութիւն իւր հեռաւոր նեղեալ ազգակցաց, — ներկայ երիտասարդութեան՝ իբրեւ իրեն ապագայ սերնդոց՝ պաշտպան հանդիսացաւ, և առ այս՝ անիրաւ պահանջմանց դէմ բողբոջեց, — եթէ ձեռնամուխ եղաւ քանի մը նոր օգտակար գործառնութեանց ու զբարոյական կենդանութիւնն ըստ բաւականի ցուցուց, — անտարակոյս ենք թէ երբ վերնանայն մերձաւոր դժուարութիւնք որք սոսկ ժամանակիս հետեւանքն են, 'ի նախախնամութենէ շնորհեալ նպաստիւք, և իցիւ՝ շատ կերպ բարեյաջող պարաւ,

զայիւք, տասնապատիկ պիտի արիանայ՝ իմաստուն միութեամբ ու ժրութեամբ, զիւր նիւթական կացութիւնն ապահովելու և զբարոյական կեանքն և ևս զարգացնելու :

Սակայն որչափ ալ մոռնալով առ վայր մի զամենայն աղէտս և զվիշտ, 'ի բռւր սրտէ ուրախակից կ'ըլլանք մեր մէջ եղած ըստ բաւականի վառ ազգասիրական եռանդեան, և մայր հայրենեաց պիտանի և միութարիչ ըլլալու ջանից և յուսաւէտ սկըսուածոց, և առ այսպիսիս և ևս կը խրախուսենք զհամազգիս, բայց կը յորդորուինք մեր մէջ քանի խորհրդածութիւնքն ալ աւելցնել պատեհաւ աւմանորոյ, և ըսել, թէ՛ մեր պէտքն ու վէրք որչափ շատ են՝ այնչափ ալ հարկ է որ կորովաբիւր տեսութեամբ դիտուին, և մանաւանդ անոնց պատճառքն ու դարման մեծ ուշիմութեամբ և ընտրանօք խորհուին : Առ այս պէտք է համոզուինք նախ, թէ՛ որչափ ալ ժամանակիս ծանր հարկին տակ ճնշուած կը տառապինք 'ի զանազան կողմանս, բայց այնմ ըստ մեծի մասին մեք իսկ եմք պատճառ, հեռատեսութիւն չունենալու և անցեալ նեղութեամբք չխրատուելու պակասութեամբ : Մտածենք ու հարցընենք մեզի՝ իբրև ազգ և ժողովուրդ, և իբրև առանձին իսկ տոհմ և գերդաստանք, թէ՛ ո՞վ և կամ ո՞ր օրէնքն ու հարկ կը ստիպէ զմեզ յայլ և այլ կողմանս գրեթէ իսպառ բազդին յանձնուելու, մինչդեռ ճշմարիտ առածն կ'ըսէ. Օգնէ քեզի՝ որպէս զի Աստուած ալ օգնէ : Ո՞վ կ'արգելու զմեզ տնտեսական հայթհայթանաց հաստատուն օրէնք չունենալու, մեզի մերձաւոր ու յառաջադէմ ազգաց լուսամիտ ոճէն մեծագոյն օգուտ չբաղելու, ազգային անխախտ ստացուածք չչափցնելու, կամ գոնեա չկորսնցնելու յայնց զոմանս բովանդակապէս՝ մեծ գործոց մէջ մեծապէս ապահով եղող ճամբայ չբռնելով, 'ի զրկումն ապագայ սերնդոց :

Մասնաւորենք խօրքերնիս. եթէ ամենազօռար կը համարուի մեզի համար վերնագունից և կարողագունից զլուխ կենալովն գործատուններ բանալ, որոց ընծայած բարին հաստատուն է և բազմաց 'ի մէջն օգտակար, կամ նորանոր մեծ ու փոքր դրամասեղաններ հաստատել, և սոսկ համազգեօք գործելով օգտել ու օգտուիլ փոխադարձաբար . եթէ երկրագործութեան ընդարձակօրէն և ընկերաբար մշումն տալ, մանաւանդ յայլեայլ կողմանս փոքուն Ասիոյ՝ որք նախանձելի եղած են հին և նոր ազգաց, ըստ վկայութեան նաև վերջին թագազարդ գլխոյն Գաղղիոյ, գրեթէ անհնարին կը համարուի առ ժամս, սակայն չկայ բնաւ դժուարութիւն մեր ճարտարաց ու ձեռագիտաց սկսեալ գործոց ձեռնտու ըլլալու, առ մերայինս դիմելու քան առ օտարս, և զիրենք գործածելու՝ առ 'ի խրախոյս և 'ի զիւրութիւն բարեկեցութեան այնպիսեաց, յայնս՝ որ կրնան մեզի պիտանի ըլլալ : Զկայ ամենեկին դժուարութիւն առանձինն խնամօք՝ ինչպէս հայրօրէն կ'ընեն ոմանք, մեր հովանաւորութեան ներքև առնելու զգեռակիրթ արուեստաւորս, որով անգործ ու ապերձանիկ չեն մնար բազմաթիւ ուսեալ պատանիք բիւր ծախիւք և հոգովք 'ի մերձաւոր և 'ի հեռաւոր կողմանս, և անոնց կարօտեալ և ծերունի ծնողք և արենակիցք : Ըստ այսմ չկայ բնաւ դժուարութիւն՝ իբրև նախապահեստ դարման ամենայն արկածից և հիւանդութեանց, փոխադարձ օգնութեանց ընկերութիւններ ունենալ Եւրոպացւոց

Նման, ամենափոքր գումարի հանգանակութեամբ՝ ի միոյ միոյ համարուեստ գործողաց, կանխատես ոճով և կանոնիւ, որով մեծագումար դրամագլուխ կազմել վասն կարևոր պիտոյից, իբրև Արկեղք խնայողութեան. ընկերութիւնք՝ որ կարելի են յամենայն բազմաթիւ ազգաբնակ քաղաքս և յաւանս իսկ վասն ամենայն արուեստաւորաց. եթէ գտնուինք միայն ըստ կարելւոյն մեր բնիկ վառարաններուն քով, որ է նշանակ ազգութեան մեծ ընկերական սիրոյն և միութեան, և չթողունք՝ գրեթէ ամբողջապէս ու մշտնջենաւորապէս, անմարդի և ի ձեռս տկարաց զմեր գերդաստանքն, եպերելի երկայնմտութեամբ յանդուգն համարձակութիւն տալով զայնս հարստահարել ուղղողաց :

Իր տեսներնք որ մեր նիւթական պիտոյից ու բարօրութեան պատճառաց վրայ խորհրդածել ուզած ժամանակնիս՝ կը դառնայ խօսքերնիս մեր բարոյական պէտքն ու կարօտութիւնն ալ միանգամայն յիշելու, որ գլխաւորագոյնն է, և անոնց առաւելագոյն դարմանն ևս ակնարկելու : Վասն զի եթէ նիւթականէն մասամբ կը ծագի մեր բարօրութիւնն, յայտնի է թէ բարոյականաւ՝ մտաց և սրտի մշակութեամբ, կը պարզեւի մեզ ըստ կարելւոյն լիովի գոհութիւն կենաց և կատարելութիւն. կը պարզեւի մեզ ազատութիւն, վեհ և հնարագէտ իմաստութեան ջնորհիւ, ոչ միայն ի բազմազգի յարտաքին դառն նեղութեանց՝ այլ և ի հալ և մաշ ըղձից և ի կրից. սէր և ձկտումն բարակին և ազնուին, առ ամենայն որ ինչ գաղտնի օրէնք իմաստութեան և գեղեցկութեան են ի համագոյս. այն ատենն է որ կը ծագի ճշմարիտ սրտակից միութիւն ընկերական, այս է՝ ծաւալումն ընտանեկան կենաց անուշութեան ամենայն սրտից մէջ, ճշգրիտ ըմբռնումն և վայելք այն երկնահարապոյր միխթարութեան՝ զոր կ'ազդեն և կը շնորհեն ծնողք և արեւակիցք. աւելի նուիրումն յորդուց առ հարս և հարց առ որդիս. միով բանիւ՝ աւելի առաքինական դիւցազնութիւնք տնական և տոհմային կենաց մէջ, սրբ հաւասար են աշխարհակալ և մեծագործ դիւցազանց արդեանց, և աւելի իսկ երբեմն. և այսր ամենայնի արդիւնք՝ աւելի սերտ և անոյշ ազգակցութիւն և միաձոյլ խմբումն մեր բոլոր զանգուածոյն, համապատշաճ ձևով ու փոյլմամբ, և ամենայն մասանց փոփոխակի ամրապնդելով զիրար : Ո՛վ չգիտէ թէ սոյնօրինակ զգացմամբ գործող ազգք են որ կը պայծառանան, և մարդկութեան դասակարգութեան մէջ արժանաւայել կ'ըլլան պատուոյ, զարմանաց և գովեստից, և որ մեծն է՝ երջանիկք են :

Բիւրապատկենք ուրեմն խրախոյսնիս, — վասն զի նիւթական ու բարոյական կենաց առաջին ամբողջութիւն ու ապաւէն խրախոյսն է, — մեծաքայլ ևս յառաջեցրնելու մեր ընթացքն առ նպատակն զգալի և բարոյական բարօրութեան, քաջայոյս՝ թէ անշուշտ է մեզի առ այն հասնիլն, հանդերձ ամենայն տուգանք իսկ զոր կրեցինք այս տարեաց մէջ, ուղիղ և իմաստուն տեսլութեամբ և աճամբ մեր կարօտութեանն համեմատ պէտք եղած բազմատեսակ կրթարանաց : Իր հասնինք, ոյ՛ր, եթէ մեծամեծ և ընտիր կաղապարներէ ձուլուինք յամենայնի. եթէ ունենանք կ'ըսենք աւելի սէր ընթերցման իբրև զեւրոպացին, և շատ վիպասանութիւնք, բայց ազգային՝ բարոյական և պատմական հանճարեղ վիպասանութիւնք, իբրև առտնին կրթութեան և ընթերցման նիւթ. երբ ու-

նենանք գրեթէ ամենուրեք թատրոն ազգային՝ որք զմեր զիւցազուկն ու ա. նոնց բարբը մեզի սիրցընեն ու բնաւորեն . երբ ունենանք ժողովրդական զիւր. ընտել շատ մասեանք , որք տնտեսական՝ վաճառականական ու երկրագոր. ծական ուսմանց և արուեստից շահաւէտ հիմունքն աւանդեն , և ցույցնեն թէ բարեկեցութիւնն միշտ բարոյական մշակութեան հետ կապուած է : Եւ գլխաւորելով դարձեալ խօսքերնիս դաստիարակութեան վրայ՝ երբ անպակաս ըլլան մեր մէջ ընտիր և հմուտ դաստիարակք , որպէս զի ականակիտ աղբիւր. ներէ մեր մանկութեան ծարաւն արեւցընենք . ճշմարիտ Մենտորներ՝ որք ներշնչեն և հոսեն 'ի միտս և 'ի սիրտ մեր նորընծայ երախայից և համբակաց , կենդանի ձայնիւ և օրինակաւ , զւէր ճշմարտին և գերագունից , զբուն ոգի ազգութեան , զսէր և զխոր զգացումն պարտուց . որպէս զի ըլլանք իրաւցընէ և ժառանգենք անուն – 'ի բաց թօթափելով մեր ամենայն վիրաւից կեղեանքն , կամ լաւ ևս ըսել՝ նկուն ու փոքրոգի գաղափարքն – արդարեւ ողջ , կիրթ , գործօն , անկեղծապէս բարեսիրտ , վերջապէս ազնիւ և իմաստուն ազգի . և ինչպէս յարուեստս՝ նոյնպէս և 'ի գրականական ասպարիզին օր ըստ օրէ ազնուագոյն ու գիտնազոյն նոր տաղանդաւոր գրիչներ ունենանք , որք իրենց մտաց խանդից ու հմտութեանց հետ յանդուգն կամ անսանձաթուիչ չըլլալու խոհեմութիւնը սրտերնին ունենան . և ոչ միայն արհամարհելով չանցնին անցելոյն վրայէն , մեծամեծ խնդրոց և մեծահանճար անձանց կարծեաց վրայ հարեանցի տեսութեամբ վճիռ հատանելով , այլ յարգեն զայնս և ոգևորին իբրեւ անոնց արմատոյն շառաւիղք . կամ իբրեւ նուիրական պաշտօնեայք ազգային պարծանաց՝ աւելցընեն միշտ զայնս ու հանրացընեն , հնաւանդ ազգութեան 'ի ստոյգ սիրոյ վառարանէն և իրենց վառվրուռն ու ազնիւ սրտէն ամենուն սրտից կրակն արծարծելով :

Այսպիսի ահա և առաւելագոյն ներկայի և ապագայի ցանկալի բարօրութիւնն է զոր կը մաղթենք բովանդակ ազգերնուս , և առանձինն միոյ միոյ յազգատոհմից , զրաւոր կերպիւ ալ անպակաս ազգային դաստիարակութեան և բարեկենդանութեան օղնական ըլլալու ըզձիւք ձեռնամուխ ըլլալով նաև ներկայ տարուոյս առաջիկայ Բազմալեւ չանդիսարաւիս :

Հ. Դ. Վ. ՆԱՋԱՐԵԱՅ